Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1256-10.02.2026-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) ակտիվի սկզբնական արժեք՝ ակտիվի ձեռքբերման գնի (անհատույց ստացման դեպքում՝ ստացվող ակտիվի գնի, իսկ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ներդրման դեպքում՝ կողմերի պայմանավորվածությամբ որոշված գնի, որը ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով), կառուցման կամ ստեղծման կամ մշակման ծախսերի (այդ թվում՝ չփոխհատուցվող և Օրենսգրքով սահմանված կարգով չհաշվանցվող (չնվազեցվող) հարկերի և վճարների), տեղափոխման, տեղակայման ծախսերի և (կամ) ձեռքբերման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի հանրագումար՝ դրամական արտահայտությամբ: Ընդ որում,

ա. լիզինգի (տարատեսակների) առարկան սեփականության իրավունքով հարկ վճարողին անցնելու դեպքում՝ ակտիվի սկզբնական արժեք է համարվում այդ լիզինգի առարկայի համար սույն մասի 70-րդ կետին համապատասխան հաշվարկված սկզբնական արժեքը.

բ. ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց հավասար փոխհոսքերի տեսքով ստացվող էլեկտրական էներգիայի սկզբնական արժեքը որոշվում է ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա

ունեցող անձին հավասար փոխհոսքերի տեսքով մատակարարված էլեկտրական էներգիայի արտադրության համար կատարված ծախսերի չափով.

գ. անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված, Կառավարությունը սահմանում է ակտիվի սկզբնական արժեքի որոշման կարգ.»:

Հոդված 2. Օրենսգրքի 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 16. Արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների հաշվառման կանոնները

1. Արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում՝

1) ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով հարկման բազաները, եկամուտները և ձեռքբերման արժեքները որոշվում են՝

ա. ԵՏՄ անդամ չհամարվող պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքի ներմուծման կամ ապրանքի արտահանման մաքսային հայտարարագրի գրանցման ամսաթվի դրությամբ (անկախ հետագայում այդ գործառնությունների մասով ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի ներմուծման ճշտված մաքսային հայտարարագիր կամ ապրանքի արտահանման ճշտված մաքսային հայտարարագիր ներկայացնելու հանգամանքից)՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,

բ. ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) կամ ապրանքը Հայաստանի Հանրապետությունից արտահանելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից: Այն դեպքում, երբ ապրանքը Հայաստանի Հանրապետության սահմանը հատում է օդային տրանսպորտով կամ փոստային օպերատորի կողմից մատուցվող փոստային ծառայության միջոցով, ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ

ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում հարկման բազաները, եկամուտները և ձեռքբերման արժեքները որոշվում են հաշվարկային փաստաթղթի դուրս գրման ամսաթվի դրությամբ, իսկ դրա բացակայության դեպքում՝ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում (կոնոսամենտում, բեռնագրում կամ այլ փաստաթղթերում) նշված ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

2) ապրանքների մատակարարման (այդ թվում՝ ապրանքների էլեկտրոնային առևտրի շրջանակներում ապրանքների մատակարարման), աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների մասով (բացառությամբ սույն մասի 3-5-րդ կետերով սահմանված դեպքերի) հարկման բազաները, եկամուտները և ձեռքբերման արժեքները որոշվում են Օրենսգրքի 38-րդ և 40-րդ հոդվածներով սահմանված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման պահը համարվող օրվա դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

3) հարկային գործակալի կողմից վճարվող՝ հարկման ենթակա եկամուտներից հարկի գումարը հաշվարկվում է այդ եկամուտների վճարման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

4) հարկային գործակալի բացակայության դեպքում՝ հարկման ենթակա եկամուտների, ինչպես նաև այդ եկամուտների գծով ձևավորվող հարկման բազաների նկատմամբ հարկի գումարի (այդ թվում՝ օտարերկրյա պետություններում գանձված հարկերի) հաշվարկը կատարվում է Օրենսգրքով սահմանված հաշվառման մեթոդին համապատասխան այդ եկամուտների հաշվառման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

5) արտարժույթի փոխանակման գործարքների մասով եկամուտների և ծախսերի հաշվարկը կատարվում է արտարժույթի փոխանակման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

6) բացառությամբ սույն մասի 1-5-րդ կետերում նշված գործարքների և գործառնությունների՝ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի սկզբնական արժեքները որոշվում են դրանց առաջացման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

7) սույն մասի 1-6-րդ կետերում չնշված գործարքների և գործառնությունների դեպքերում հարկման բազաները, եկամուտները և ծեռքբերման արժեքները որոշվում են դրանց համար Օրենսգրքով սահմանված հաշվառման մեթոդին համապատասխան հարկման բազաների, եկամուտների և ծեռքբերման արժեքների հաշվառման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

2. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝

1) որպես տվյալ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք, հիմք է ընդունվում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից նախորդ աշխատանքային օրը հրապարակված միջին փոխարժեքը, բացառությամբ սույն մասի երկրորդ կետով սահմանված դեպքի.

2) սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դեպքում, որպես տվյալ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք, հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տվյալ օրը հրապարակված միջին փոխարժեքը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 16.1-ին հոդվածի 2-րդ մասում «մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակված միջին փոխարժեքը» բառերը փոխարինել «նախորդ աշխատանքային օրը հրապարակված միջին փոխարժեքը» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 42-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1) գործարքի առարկա համարվող ապրանքը ենթակա է վերադարձման՝ ամբողջությամբ կամ մասնակի.».

2) 1-ին մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Ճշգրտված գործարքի մասով նախկինում դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը շարունակում է համարվել վավեր փաստաթուղթ, սակայն ճշգրտված գործարքի մասով ապրանք մատակարարողը, աշխատանք կատարողը կամ ծառայություն մատուցողը Օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով դուրս է գրում նաև Օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված՝ համապատասխան ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ:».

4) 4-րդ մասի 1-ին կետում «նվազում են» բառերից հետո լրացնել «գործարքից հաշվարկված հարկման բազաները կամ» բառերով, իսկ 4-րդ մասի 2-րդ կետում «ավելանում են» բառերից հետո լրացնել «գործարքից հաշվարկված հարկման բազաները կամ» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 56-րդ հոդվածի՝

1) 10-րդ մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 10-րդ մասի 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և նույն մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցվող ծառայության մասով դուրս գրված հաշվարկային փաստաթղթում արտացոլված գործարքի առարկա հանդիսացող ապրանքի միավորի գինը կամ աշխատանքի, ծառայության սակագինը, ընդհանուր արժեքը, գործարքի կողմերի միջև կնքված գրավոր պայմանագրով կամ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում ենթակա է փոփոխման:».

3) 11.1-ին մասում «չի կարող դուրս գրվել» բառերից հետո լրացնել «կամ դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը (այդ թվում՝ ճշգրտող) չի կարող չեղարկվել» բառերով.

4) 13-րդ մասը լրացնել «, իսկ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնով ձեռքբերված ապրանքի վերադարձի մասով Օրենսգրքով սահմանված կարգով տրամադրվում է հսկիչ դրամարկղային մեքենայի վերադարձի կտրոն» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 59-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով» բառերը փոխարինել «2-րդ և 3-րդ մասերով» բառերով.

2) 2-րդ մասի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն մասի կիրառության իմաստով գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպություններ ու անհատ ձեռնարկատերեր են համարվում Օրենսգրքի

126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրողները:».

3) ուժը կորցրած ճանաչել 2.1-ին մասը,

4) 5-րդ մասի 2-րդ պարբերությունում «(բացառությամբ գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման գործարքների)» բառերը փոխարինել «(բացառությամբ գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքների)» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետում «ֆինանսական ակտիվի» և Օրենսգրքի 256-րդ հոդվածի 1-ին մասում «ֆինանսական ակտիվների» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ դրամական պահանջի իրավունքի զիջման» բառերը:

Հոդված 8. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքի մատակարարման գործարքի դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկվող մաքսային արժեքը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի մատակարարման գործարքի դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ապրանքի արժեքը՝ դրամական արտահայտությամբ՝ առանց ԱԱՀ-ի:»:

Հոդված 9 . Օրենսգրքի 62-րդ հոդվածի՝

1) 8-րդ մասի 2-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և նույն մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝

«3) կառուցապատողի կողմից կառուցապատման իրավունքով կառուցված այն անավարտ, կիսակառույց շինությունների օտարման գործարքների դեպքում, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է:»,

2) 20-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) հանրակրթական ուսումնական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, մասնագիտական ուսումնական հաստատությունների, որակավորման և վերաորակավորման միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը*, ինչպես նաև Կառավարության սահմանած կարգով իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերի շրջանակներում ուսուցման ծառայությունների մատուցումը*: Սույն կետում նշված հասկացությունները կիրառվում են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» և «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում նույն հասկացությունների կիրառության իմաստով ու նշանակությամբ.».

2) 14-րդ կետում «պետությանը» բառից հետո լրացնել «կամ համայնքին» բառերով.

3) 18-րդ կետից հանել «պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից» բառերը և «տուրքի վճարում» բառերից հետո լրացնել «՝ համապատասխանաբար վճարվող պետական տուրքի կամ տեղական տուրքի մասով» բառերը.

4) 48-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«48) զբոսաշրջային օպերատորի կամ զբոսաշրջային գործակալի կողմից օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջային գործակալի կողմից մատուցվող գործակալական ծառայությունները, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում.»:

Հոդված 11. Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5) Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմնում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, եթե պայմանագրային հարաբերությունների

կողմը ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպություն, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, կամ անհատ ձեռնարկատեր է, կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը մատուցում է էլեկտրոնային ծառայություններ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին:»:

Հոդված 12. Օրենսգրքի 71-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 2-րդ մասով՝

«2. Համապատասխան գործարքին վերաբերող՝ Օրենսգրքի 56-րդ հոդվածի 10-րդ մասի 4-6-րդ կետերով սահմանված դեպքերում չեղարկված հարկային հաշվի փոխարեն՝

1) մատակարարների կողմից դուրս գրված՝ ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վավերացված նոր հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարն արտացոլվում է այն հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, որում սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» կամ «բ» ենթակետերով սահմանված կարգով հաշվանցման (պակասեցման) ենթակա կլիներ չեղարկված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը,

2) ԱԱՀ վճարող համարվողի կողմից Օրենսգրքի 56-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով դուրս գրված նոր հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարն արտացոլվում է այն հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, որում սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետերով սահմանված կարգով հաշվանցման (պակասեցման) ենթակա կլիներ չեղարկված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը:»:

Հոդված 13. Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «օտարման գործարքների» բառերից հետո լրացնել «, Կառավարության որոշումների հիման վրա ԱԱՀ վճարողների կողմից նվիրատվության ձևով պետությանը կամ համայնքին ապրանքի մատակարարման գործարքների» բառերով:

Հոդված 14. Օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասում «ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ» բառերը փոխարինել «ԱԱՀ հաշվարկ» բառերով:

Հոդված 15. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «ամսվա 20-ը ներառյալ» բառերից հետո լրացնել «Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերը,

2) 2-րդ կետից հանել «՝ թղթային կրիչով (չորս օրինակից) և էլեկտրոնային տարբերակով կամ ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը՝ էլեկտրոնային տարբերակով՝ հարկ վճարողի էլեկտրոնային (թվային) ստորագրությամբ» բառերը:

Հոդված 16. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում «վճարվող գումարներ» բառերից հետո լրացնել «, Կառավարություն սահմանված կարգով» բառերը:

Հոդված 17. Օրենսգրքի 88-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասից հանել «(բացառությամբ կոնյակի սպիրտի)» բառերը,

2) ուժը կորցրած ճանաչել 4-րդ և 5-րդ մասերը:

Հոդված 18. Օրենսգրքի 99-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «, բացառությամբ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների, որոնց համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում՝ որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ» բառերը:

Հոդված 19. Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «Օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերին» բառերը փոխարինել «Օրենսգրքի 73-րդ հոդվածին» բառերով:

Հոդված 20. Օրենսգրքի 107-րդ հոդվածի 4-րդ մասում «ռեզիդենտ շահութահարկ վճարողին կամ» բառերը փոխարինել «ռեզիդենտ կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատիրոջը կամ» բառերով:

Հոդված 21. Օրենսգրքի 108-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ կետում «շահութահարկ վճարողի բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների տեղաբաշխման» բառերը փոխարինել «շահութահարկ վճարողի

կողմից իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների օտարման (տեղաբաշխման)» բառերով.

2) 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետում «ռեզիդենտ շահութահարկ վճարողին» բառերը փոխարինել «ռեզիդենտին» բառով, իսկ «ռեզիդենտ շահութահարկ վճարողի» բառերը փոխարինել «ռեզիդենտի» բառով:

Հոդված 22. Օրենսգրքի 109-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի վերջին պարբերության 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել նոր 6-րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ՝

«6) կառուցապատողի կողմից կառուցապատման իրավունքով կառուցված այն անավարտ, կիսակառույց շինությունների օտարման գործարքների դեպքում, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է:»,

2) 3-րդ մասի 3-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «տոկոսների (այդ թվում՝ լիզինգի (տարատեսակների) պայմանագրերի շրջանակներում հաշվարկվող տոկոսի գումարների) տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված տոկոսների հաշվարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ կամ պարտքի ժամկետը լրանալու պահից:».

3) 4-րդ մասում՝

ա. 16-րդ կետից հանել «4-րդ մասի» բառերը և նույն կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

բ. լրացնել 17-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«17) Արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս արտարժույթի վաճառքի կամ ձեռքբերման ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեքի կիրառման արդյունքում ստացվող եկամուտները:»:

Հոդված 23. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից հատուցում ստանալու դեպքում, հատուցման ենթակա էլեկտրական էներգիայի

արտադրության հետ կապված՝ ինքնավար էներգաարտադրողների կողմից կատարված ծախսերը.»:

Հոդված 24. Օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս ներկայացուցչական ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են հարկային տարվա համախառն եկամտի 0.5 տոկոսը չգերազանցող չափով, բայց ոչ ավել հինգ միլիոն դրամը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման հարկային տարվա հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չի նվազեցվում ներկայացուցչական ծախսերի այն մասը, որը գերազանցում է հինգ միլիոն դրամը:»:

Հոդված 25. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 8-րդ մասում՝

1) 7-րդ կետից հանել «2-րդ մասի» բառերը և նույն կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել 8-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«8) արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս արտարժույթի վաճառքի կամ ձեռքբերման ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեքի կիրառման արդյունքում կատարվող ծախսերը:»:

Հոդված 26. Օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության՝

1) 1-ին նախադասությունը «Գույքի» բառից հետո լրացնել «(բացառությամբ դրոշմավորման ենթակա՝ ԱՏԳ ԱԱ 0401, 0402, 0403, 0404, 0405, 0406 և 2105 00 ծածկագրերին դասվող ապրանքների)» բառերով.

2) 1-ին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝ «Դրոշմավորման ենթակա՝ ԱՏԳ ԱԱ 0401, 0402, 0403, 0404, 0405, 0406 և 2105 00 ծածկագրերին դասվող ապրանքների փաստաթղթերով հիմնավորված որակական կորուստը համախառն եկամտից նվազեցվում է այդ կորստի տեղի ունենալու

կամ այդ կորուստը հայտնաբերելու հարկային տարվա համախառն եկամտի երկու տոկոսը չգերազանցող չափով՝ տվյալ հարկային տարվա ընթացքում:»:

Հոդված 27. Օրենսգրքի 132-րդ հոդված 2-րդ մասի՝

1) 5-րդ կետում «հարկային գործակալ չհանդիսացող» բառերը փոխարինել «այլ» բառով.

2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6) եկամտի ստացման պահանջի ներումը ոչ ռեզիդենտին.»:

Հոդված 28. Օրենսգրքի 142-րդ հոդվածում լրացվել 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ եկամտային հարկով հարկման օբյեկտի դրամարկղային մեթոդով հաշվառումն իրականացվում է Օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, բացառությամբ Օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի:»:

Հոդված 29. Օրենսգրքի 288-րդ հոդվածի 9.1-ին մասում «ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից» բառերից հետո լրացնել «*Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին համապատասխան ԱԱՀ հաշվարկելու ու վճարելու պարտավորություն կրելու դեպքում, այդ թվում՝*» բառերը, *իսկ նույն մասի երկրորդ նախադասությունում «էլեկտրոնային ծառայություն» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին» բառերը*:

Հոդված 30. Օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մասում «2.1-ին մասով» բառերը փոխարինել «3-րդ մասով» բառերով:

Հոդված 31. Օրենսգրքի 303-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Օրենսգրքի 288-րդ հոդված 9.1-ին և 9.2-րդ մասերին համապատասխան հարկային մարմնում հաշվառված Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառումից հանվում է Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 32.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից, *բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետի, 5-րդ հոդվածի 4-րդ կետի, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ հոդվածների և սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի: Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ*

կետը, 5-րդ հոդվածի 4-րդ կետը, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ հոդվածները և սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի դրույթները տարածվում են 2025 թվականի հուլիսի 4-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի, 22-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները տարածվում են 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

4. Սույն օրենքի 12-րդ հոդվածի դրույթները կիրառվում են նույն հոդվածի ուժի մեջ մտնելուց հետո Օրենսգրքով սահմանված կարգով չեղարկված հարկային հաշիվների փոխարեն դուրս գրված նոր հարկային հաշիվների մասով՝ անկախ չեղարկված հարկային հաշիվը մինչև սույն օրենքի 12-րդ հոդվածն ուժի մեջ մտնելը դուրս գրված լինելու հանգամանքից:

5. Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ներառող հարկային տարիների ընթացքում, երբ Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով, 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում հարկ վճարողի կողմից չի ներկայացվել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն և չի հաշվառվել ԱԱՀ վճարող, հարկ վճարողը կարող է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 21-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել դիմում՝ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու հնարավորություն տալու մասին (այսուհետ՝ Դիմում): Դիմումը ներկայացվում է թղթային կրիչով կամ էլեկտրոնային փոստով՝ հարկային մարմնի սահմանած ձևին համապատասխան: Սույն մասին համապատասխան ներկայացված Դիմումի հիման վրա մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով, 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում ու ժամկետներում հարկային մարմնի կողմից հաշվառվում է որպես ԱԱՀ վճարող: Սույն մասի դրույթները տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ և հարկային մարմնի կողմից որպես ԱԱՀ վճարող չհաշվառելու հիմքով վարչական ակտերով առաջադրված ԱԱՀ-ի պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման: Ենթակա են վերահաշվարկման նաև դատական կարգով բողոքարկված վարչական ակտերով հարկային մարմնի կողմից որպես ԱԱՀ վճարող չհաշվառելու հիմքով առաջադրված ԱԱՀ-

ի պարտավորությունները, այդ թվում՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում:

6. Սույն օրենքի 18-րդ հոդվածի դրույթները կիրառվում են նույն հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մասով:

7. Սույն օրենքի 12-րդ, 16-րդ և 31-րդ հոդվածներով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ընդունելու օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Կ-1256-10.02.2026-ՏՀ-011/1

Լրամշակված նախագիծ

~~Առաջին ընթերցում~~

Երկրորդ ընթերցում

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը շարադրել հետևյալ ~~բովանդակությամբ~~խմբագրությամբ.

«20) ակտիվի սկզբնական արժեք՝ ակտիվի ձեռքբերման գնի (անհատույց ստացման դեպքում՝ ստացվող ակտիվի գնի, իսկ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ներդրման դեպքում՝ կողմերի պայմանավորվածությամբ որոշված գնի, որը ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով), կառուցման կամ ստեղծման կամ մշակման ծախսերի (այդ թվում՝ չփոխհատուցվող և Օրենսգրքով սահմանված կարգով չհաշվանցվող (չնվազեցվող) հարկերի և վճարների), տեղափոխման, տեղակայման ծախսերի և (կամ) ձեռքբերման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի հանրագումար՝ դրամական արտահայտությամբ: Ընդ որում,

ա) լիզինգի (տարատեսակների) առարկան սեփականության իրավունքով հարկ վճարողին անցնելու դեպքում՝ ակտիվի սկզբնական արժեք է համարվում այդ լիզինգի առարկայի համար սույն մասի 70-րդ կետին համապատասխան հաշվարկված սկզբնական արժեքը.

բ) ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց հավասար փոխհոսքերի տեսքով ստացվող էլեկտրական էներգիայի սկզբնական արժեքը որոշվում է ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին հավասար փոխհոսքերի տեսքով մատակարարված էլեկտրական էներգիայի արտադրության համար կատարված ծախսերի չափով.

գ) անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված, Կառավարությունը սահմանում է ակտիվի սկզբնական արժեքի որոշման կարգ.»:

Հոդված 2. Օրենսգրքի 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 16. Արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների հաշվառման կանոնները

1. Արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում՝

1) ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով հարկման բազաները, եկամուտները և ծեռքբերման արժեքները որոշվում են՝

ա. ԵՏՄ անդամ չհամարվող պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքի ներմուծման կամ ապրանքի արտահանման մաքսային հայտարարագրի գրանցման ամսաթվի դրությամբ (անկախ հետագայում այդ գործառնությունների մասով ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի ներմուծման ճշտված մաքսային հայտարարագիր կամ ապրանքի արտահանման ճշտված մաքսային հայտարարագիր ներկայացնելու հանգամանքից)՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,

բ. ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում՝ համապատասխանաբար ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) կամ ապրանքը Հայաստանի Հանրապետությունից արտահանելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից: Այն դեպքում, երբ ապրանքը Հայաստանի Հանրապետության սահմանը հատում է օդային տրանսպորտով կամ փոստային օպերատորի կողմից մատուցվող փոստային ծառայության միջոցով, ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում հարկման բազաները, եկամուտները և ձեռքբերման արժեքները որոշվում են հաշվարկային փաստաթղթի դուրս գրման ամսաթվի դրությամբ, իսկ դրա բացակայության դեպքում՝ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում (կոնոսամենտում, բեռնագրում կամ այլ փաստաթղթերում) նշված ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

2) ապրանքների մատակարարման (այդ թվում՝ ապրանքների էլեկտրոնային առևտրի շրջանակներում ապրանքների մատակարարման), աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների մասով (բացառությամբ սույն մասի 3-5-րդ կետերով սահմանված դեպքերի) հարկման բազաները, եկամուտները և ձեռքբերման արժեքները որոշվում են Օրենսգրքի 38-րդ և 40-րդ հոդվածներով սահմանված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման պահը համարվող օրվա դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

3) հարկային գործակալի կողմից վճարվող՝ հարկման ենթակա եկամուտներից հարկի գումարը հաշվարկվում է այդ եկամուտների վճարման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

4) հարկային գործակալի բացակայության դեպքում՝ հարկման ենթակա եկամուտների, ինչպես նաև այդ եկամուտների գծով ձևավորվող հարկման բազաների նկատմամբ հարկի գումարի (այդ թվում՝ օտարերկրյա պետություններում գանձված հարկերի) հաշվարկը կատարվում է Օրենսգրքով սահմանված հաշվառման մեթոդին համապատասխան այդ եկամուտների հաշվառման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

5) արտարժույթի փոխանակման գործարքների մասով եկամուտների և ծախսերի հաշվարկը կատարվում է արտարժույթի փոխանակման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

6) բացառությամբ սույն մասի 1-5-րդ կետերում նշված գործարքների և գործառնությունների՝ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի սկզբնական արժեքները որոշվում են դրանց առաջացման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից.

7) սույն մասի 1-6-րդ կետերում չնշված գործարքների և գործառնությունների դեպքերում հարկման բազաները, եկամուտները և ծեռքբերման արժեքները որոշվում են դրանց համար Օրենսգրքով սահմանված հաշվառման մեթոդին համապատասխան հարկման բազաների, եկամուտների և ծեռքբերման արժեքների հաշվառման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

2. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝

1) որպես տվյալ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք, հիմք է ընդունվում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից նախորդ աշխատանքային օրը հրապարակված միջին փոխարժեքը, բացառությամբ սույն մասի երկրորդ կետով սահմանված դեպքի.

2) սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դեպքում, որպես տվյալ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք, հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տվյալ օրը հրապարակված միջին փոխարժեքը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 16.1-ին հոդվածի 2-րդ մասում «մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակված միջին փոխարժեքը» բառերը փոխարինել «նախորդ աշխատանքային օրը հրապարակված միջին փոխարժեքը» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 42-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) գործարքի առարկա համարվող ապրանքը ենթակա է վերադարձման՝ ամբողջությամբ կամ մասնակի,».

2) 1-ին մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Ճշգրտված գործարքի մասով նախկինում դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը շարունակում է համարվել վավեր փաստաթուղթ, սակայն ճշգրտված գործարքի մասով ապրանք մատակարարողը, աշխատանք կատարողը կամ ծառայություն մատուցողը Օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով դուրս է գրում նաև Օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված՝ համապատասխան ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ:».

4) 4-րդ մասի 1-ին կետում «նվազում են» բառերից հետո լրացնել «գործարքից հաշվարկված հարկման բազաները կամ» բառերով, իսկ 4-րդ մասի 2-րդ կետում «ավելանում են» բառերից հետո լրացնել «գործարքից հաշվարկված հարկման բազաները կամ» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 56-րդ հոդվածի՝

1) 10-րդ մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 10-~~ին~~~~դ~~ մասի 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և նույն մասը ~~լրացնել~~ ~~լրացնել~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցվող ծառայության մասով դուրս գրված հաշվարկային փաստաթղթում արտացոլված գործարքի առարկա հանդիսացող ապրանքի միավորի գինը կամ աշխատանքի, ծառայության սակագինը, ընդհանուր արժեքը, գործարքի կողմերի միջև կնքված գրավոր պայմանագրով կամ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում ենթակա է փոփոխման:».

3) 11.1-ին մասում «չի կարող դուրս գրվել» բառերից հետո լրացնել «կամ դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը (այդ թվում՝ ճշգրտող) չի կարող չեղարկվել» բառերով,

4) 13-րդ մասը լրացնել «, իսկ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնով ձեռքբերված ապրանքի վերադարձի մասով Օրենսգրքով սահմանված կարգով տրամադրվում է հսկիչ դրամարկղային մեքենայի վերադարձի կտրոն» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 59-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով» բառերը փոխարինել «2-րդ և 3-րդ մասերով» բառերով.

2) 2-րդ մասի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն մասի կիրառության իմաստով գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպություններ ու անհատ ձեռնարկատերեր են համարվում Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրողները:».

3) ուժը կորցրած ճանաչել 2.1-ին մասը,

4) 5-րդ մասի 2-րդ պարբերությունում «(բացառությամբ գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման գործարքների)» բառերը փոխարինել «(բացառությամբ գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքների)» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետում «ֆինանսական ակտիվի» և Օրենսգրքի 256-րդ հոդվածի 1-ին մասում «ֆինանսական ակտիվների» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ դրամական պահանջի իրավունքի զիջման» բառերը:

Հոդված 8. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքի մատակարարման գործարքի դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկվող մաքսային արժեքը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի մատակարարման գործարքի դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ապրանքի արժեքը՝ դրամական արտահայտությամբ՝ առանց ԱԱՀ-ի:»:

Հոդված 9. Օրենսգրքի 62-րդ հոդվածի՝

1) 8-րդ մասի 2-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և նույն մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝

«3) կառուցապատողի կողմից կառուցապատման իրավունքով կառուցված այն անավարտ, կիսակառույց շինությունների օգտագործման գործարքների դեպքում, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է,».

2) 20-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) հանրակրթական ուսումնական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, մասնագիտական ուսումնական հաստատությունների, որակավորման և վերաորակավորման միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը*, ինչպես նաև Կառավարության սահմանած կարգով իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերի շրջանակներում ուսուցման ծառայությունների մատուցումը*: Սույն կետում նշված հասկացությունները կիրառվում են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» և «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում նույն հասկացությունների կիրառության իմաստով ու նշանակությամբ.».

2) 14-րդ կետում «պետությանը» բառից հետո լրացնել «կամ համայնքին» բառերով.

3) 18-րդ կետից հանել «պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից» բառերը և «տուրքի վճարում» բառերից հետո լրացնել «՝ համապատասխանաբար վճարվող պետական տուրքի կամ տեղական տուրքի մասով» բառերը.

4) 48-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«48) զբոսաշրջային օպերատորի կամ զբոսաշրջային գործակալի կողմից օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջային գործակալի կողմից մատուցվող գործակալական ծառայությունները, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում.»:

Հոդված 11. Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5) Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է Օրենսգրքով սահմանված կարգով հարկային

մարմնում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, եթե պայմանագրային հարաբերությունների կողմը ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպություն, բացառությամբ պետական մարմինների համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, կամ անհատ ձեռնարկատեր է, կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը մատուցում է էլեկտրոնային ծառայություններ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին~~, կամ առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը էլեկտրոնային առևտրի շրջանակներում ապրանքներ է մատակարարում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին~~:»:

Հոդված 12. Օրենսգրքի 71-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 2-րդ մասով՝

«2. Համապատասխան գործարքին վերաբերող՝ Օրենսգրքի 56-րդ հոդվածի 10-րդ մասի 4-6-րդ կետերով սահմանված դեպքերում չեղարկված հարկային հաշվի փոխարեն՝

1) մատակարարների կողմից դուրս գրված՝ ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վավերացված նոր հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարն արտացոլվում է այն հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, որում սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» կամ «բ» ենթակետերով սահմանված կարգով հաշվանցման (պակասեցման) ենթակա կլիներ չեղարկված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը,

2) ԱԱՀ վճարող համարվողի կողմից Օրենսգրքի 56-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով դուրս գրված նոր հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարն արտացոլվում է այն հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, որում սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետերով սահմանված կարգով հաշվանցման (պակասեցման) ենթակա կլիներ չեղարկված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը:»:

Հոդված 13. Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «օտարման գործարքների» բառերից հետո լրացնել «, Կառավարության որոշումների հիման վրա ԱԱՀ վճարողների կողմից նվիրատվության ձևով պետությանը կամ համայնքին ապրանքի մատակարարման գործարքների» բառերով:

Հոդված 14. Օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասում «ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ» բառերը փոխարինել «ԱԱՀ հաշվարկ» բառերով:

Հոդված 15. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «ամսվա 20-ը ներառյալ» բառերից հետո լրացնել «Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերը,

2) 2-րդ կետից հանել «՝ թղթային կրիչով (չորս օրինակից) և էլեկտրոնային տարբերակով կամ ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը՝ էլեկտրոնային տարբերակով՝ հարկ վճարողի էլեկտրոնային (թվային) ստորագրությամբ» բառերը:

Հոդված 16. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում «վճարվող գումարներ» բառերից հետո լրացնել «, Կառավարություն սահմանված կարգով» բառերը:

Հոդված 17. Օրենսգրքի 88-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասից հանել «(բացառությամբ կոնյակի սպիրտի)» բառերը,

2) ուժը կորցրած ճանաչել 4-րդ և 5-րդ մասերը:

Հոդված 18. Օրենսգրքի 99-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «, բացառությամբ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների, որոնց համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում՝ որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ» բառերը:

Հոդված 19. Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «Օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերին» բառերը փոխարինել «Օրենսգրքի 73-րդ հոդվածին» բառերով:

Հոդված 20. Օրենսգրքի 107-րդ հոդվածի 4-րդ մասում «ռեզիդենտ շահութահարկ վճարողին կամ» բառերը փոխարինել «ռեզիդենտ կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատիրոջը կամ» բառերով:

Հոդված 21. Օրենսգրքի 108-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ կետում «շահութահարկ վճարողի բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների տեղաբաշխման» բառերը փոխարինել «շահութահարկ վճարողի կողմից իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների օտարման (տեղաբաշխման)» բառերով.

2) 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետում «ռեզիդենտ շահութահարկ վճարողին» բառերը փոխարինել «ռեզիդենտին» բառով, իսկ «ռեզիդենտ շահութահարկ վճարողի» բառերը փոխարինել «ռեզիդենտի» բառով:

Հոդված 22. Օրենսգրքի 109-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի վերջին պարբերության 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել նոր 6-րդ կետով հետևյալ խմբագրությամբ՝

«6) կառուցապատողի կողմից կառուցապատման իրավունքով կառուցված այն անավարտ, կիսակառույց շինությունների օգտարման գործարքների դեպքում, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է:».

~~1)~~ *2)* 3-րդ մասի 3-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «տոկոսների (այդ թվում՝ լիզինգի (տարատեսակների) պայմանագրերի շրջանակներում հաշվարկվող տոկոսի գումարների) տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված տոկոսների հաշվարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ կամ պարտքի ժամկետը լրանալու պահից».

~~2)~~*3)* 4-րդ մասում՝

ա. 16-րդ կետից հանել «4-րդ մասի» բառերը և նույն կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

բ. լրացնել 17-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«17) Արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս արտարժույթի վաճառքի կամ ձեռքբերման ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին

փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեքի կիրառման արդյունքում ստացվող եկամուտները:»:

Հոդված 23. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից հատուցում ստանալու դեպքում, հատուցման ենթակա էլեկտրական էներգիայի արտադրության հետ կապված՝ ինքնավար էներգաարտադրողների կողմից կատարված ծախսերը.»:

Հոդված 24. Օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս ներկայացուցչական ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են հարկային տարվա համախառն եկամտի 0.5 տոկոսը չգերազանցող չափով, բայց ոչ ավել հինգ միլիոն դրամը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման հարկային տարվա հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չի նվազեցվում ներկայացուցչական ծախսերի այն մասը, որը գերազանցում է հինգ միլիոն դրամը:»:

Հոդված 25. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 8-րդ մասում՝

1) 7-րդ կետից հանել «2-րդ մասի» բառերը և նույն կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել 8-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«8) արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս արտարժույթի վաճառքի կամ ձեռքբերման ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեքի կիրառման արդյունքում կատարվող ծախսերը:»:

Հոդված 26. Օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության՝

1) 1-ին նախադասությունը «Գույքի» բառից հետո լրացնել «(բացառությամբ դրոշմավորման ենթակա՝ ԱՏԳ ԱԱ 0401, 0402, 0403, 0404, 0405, 0406 և 2105 00 ծածկագրերին դասվող ապրանքների)» բառերով.

2) 1-ին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝ «Դրոշմավորման ենթակա՝ ԱՏԳ ԱԱ 0401, 0402, 0403, 0404, 0405, 0406 և 2105 00 ծածկագրերին դասվող ապրանքների փաստաթղթերով հիմնավորված որակական կորուստը համախառն եկամտից նվազեցվում է այդ կորստի տեղի ունենալու կամ այդ կորուստը հայտնաբերելու հարկային տարվա համախառն եկամտի երկու տոկոսը չգերազանցող չափով՝ տվյալ հարկային տարվա ընթացքում:»:

Հոդված 27. Օրենսգրքի 132-րդ հոդված 2-րդ մասի՝

1) 5-րդ կետում «հարկային գործակալ չհանդիսացող» բառերը փոխարինել «այլ» բառով.

2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6) եկամտի ստացման պահանջի ներումը ոչ ռեզիդենտին.»:

Հոդված 28. Օրենսգրքի 142-րդ հոդվածում լրացվել 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ եկամտային հարկով հարկման օբյեկտի դրամարկղային մեթոդով հաշվառումն իրականացվում է Օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, բացառությամբ Օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի:»:

Հոդված 29. Օրենսգրքի 288-րդ հոդվածի 9.1-ին մասում «ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից» բառերից հետո լրացնել «~~ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը ծառայության, այդ թվում՝ էլեկտրոնային, մատուցման կամ Հայաստանի Հանրապետության~~*Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին համապատասխան ԱԱՀ հաշվարկելու ու վճարելու պարտավորություն կրելու դեպքում, այդ թվում՝*» բառերը*, իսկ նույն մասի երկրորդ նախադասությունում «էլեկտրոնային ծառայություն» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին» բառերը*:

Հոդված 30. Օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մասում «2.1-ին մասով» բառերը փոխարինել «3-րդ մասով» բառերով:

Հոդված 31. Օրենսգրքի 303-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Օրենսգրքի 288-րդ հոդված 9.1-ին և 9.2-րդ մասերին համապատասխան հարկային մարմնում հաշվառված Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառումից հանվում է Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 32.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից*, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետի, 5-րդ հոդվածի 4-րդ կետի, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ հոդվածների և սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի: Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետը, 5-րդ հոդվածի 4-րդ կետը, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ հոդվածները և սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից*:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի դրույթները տարածվում են 2025 թվականի հուլիսի 4-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի, 22-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները տարածվում են 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

~~3~~*4*. Սույն օրենքի 12-րդ հոդվածի դրույթները կիրառվում են նույն հոդվածի ուժի մեջ մտնելուց հետո Օրենսգրքով սահմանված կարգով չեղարկված հարկային հաշիվների փոխարեն դուրս գրված նոր հարկային հաշիվների մասով՝ անկախ չեղարկված հարկային հաշիվը մինչև սույն օրենքի 12-րդ հոդվածն ուժի մեջ մտնելը դուրս գրված լինելու հանգամանքից:

5. Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ներառող հարկային տարիների ընթացքում, երբ Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով, 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում հարկ վճարողի կողմից չի ներկայացվել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն և չի հաշվառվել ԱԱՀ վճարող, հարկ վճարողը կարող է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 21-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել դիմում՝ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու հնարավորություն տալու մասին (այսուհետ՝ Դիմում): Դիմումը ներկայացվում է թղթային կրիչով կամ էլեկտրոնային փոստով՝ հարկային մարմնի սահմանած ձևին համապատասխան: Սույն մասին համապատասխան ներկայացված Դիմումի հիման վրա մինչև 2026 թվականի դեկտեմբերի

31-ը ներառյալ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով, 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում ու ժամկետներում հարկային մարմնի կողմից հաշվառվում է որպես ԱԱՀ վճարող: Սույն մասի դրույթները տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ և հարկային մարմնի կողմից որպես ԱԱՀ վճարող չհաշվառելու հիմքով վարչական ակտերով առաջադրված ԱԱՀ-ի պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման: Ենթակա են վերահաշվարկման նաև դատական կարգով բողոքարկված վարչական ակտերով հարկային մարմնի կողմից որպես ԱԱՀ վճարող չհաշվառելու հիմքով առաջադրված ԱԱՀ-ի պարտավորությունները, այդ թվում՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում:

~~4~~*6*. Սույն օրենքի 18-րդ հոդվածի դրույթները կիրառվում են նույն հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մասով:

~~5~~7. Սույն օրենքի 12-րդ, 16-րդ և 31-րդ հոդվածներով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ընդունելու օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1256-10.02.2026-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	**«**Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **լրամշակված օրենքի նախագծի 1-ին հոդված**	Քանի որ լրամշակված նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է վերախմբագրել ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը, ուստի այդ կետը վերախմբագրելու հետ կապված հոդվածում առկա տեխնիկական վրիպակն ուղղելու համար անհրաժեշտ է այդ կետում «բովանդակությամբ» բառը փոխարինել «խմբագրությամբ» բառով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածում «բովանդակությամբ» բառը փոխարինվել է «խմբագրությամբ» բառով:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**«**Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **լրամշակված**	Լրամշակված նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետում առկա տեխնիկական վրիպակներն ուղղելու համար անհրաժեշտ է այդ կետում «10-ին» բառը փոխարինել «10-րդ» բառով, իսկ «լրացնել լրացնել» բառերը փոխարինել «լրացնել» բառով:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետում «10-ին» բառը փոխարինվել է «10-րդ» բառով, իսկ «լրացնել լրացնել» բառերը՝ «լրացնել» բառով:	Ընդունվել է:

		օրենքի նախագծի 5-րդ հոդված			
3.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **լրամշակված օրենքի նախագծի 9-րդ հոդված**	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան շենք, շինությունների, այդ թվում՝ անավարտ օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսի չափով, բացառությամբ նույն մասով սահմանված դեպքերի: «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներում 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-569-Ն օրենքով կատարված լրացումներով այն շինությունների նկատմամբ, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է, ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը սահմանվել է 1.0: Անհրաժեշտություն է առաջացել կատարել հստակեցումներ շինարարության թույլտվության ժամկետն ավարտված կամ երկարաձգված կառուցվող շինությունների օտարման գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման առանձնահատկությունների կիրառման առումով: Գործող կարգավորումներով շինարարության թույլտվության ժամկետն ավարտված կամ երկարաձգված կառուցվող շինությունների օտարման դեպքում օրենսգրքի 62-րդ հոդվածի	Ընդունվել է: Նախագծի 9-րդ հոդվածում լրացվել է նոր կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «1) 8-րդ մասի 2-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և նույն մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝ «3) կառուցապատողի կողմից կառուցապատման իրավունքով կառուցված այն անավարտ, կիսակառույց շինությունների օտարման գործարքների դեպքում, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է,»: 2) 20-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:» Միաժամանակ, լրամշակված նախագծի 9-րդ հոդվածում նոր կետի լրացման հետ կապված փոխվել է հոդվածի կետերի համարակալումը:	Ընդունվել է:

			8-րդ մասին համապատասխան հարկման բազան որոշելիս հիմք է ընդունվում կադաստրային արժեքի 80 տոկոսը, իսկ կադաստրային արժեքը որոշվում է շինարարության թույլտվության ժամկետն ավարտված կամ երկարաձգված կառուցվող շինության նախագծային փաստաթղթերում առկա տվյալներով: Այդ հարցի կարգավորման նպատակով առաջարկվում է օրենսգրքի 62-րդ հոդվածի 8-րդ մասով կատարել բացառություն և սահմանել, որ կադաստրային արժեքի 80 տոկոսի չափով ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման կանոնը չի կիրառվում կառուցապատողի կողմից կառուցապատման իրավունքով կառուցված այն անավարտ, կիսակառույց շինությունների օտարման գործարքների դեպքում, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է: Միաժամանակ, լրամշակված նախագծում 9-րդ հոդվածում նոր կետի լրացման հետ կապված առաջարկվում է փոխել հոդվածի կետերի համարակալումը:		
4.	ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **օրենքի նախագծի 10-**	ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառման շրջանակը հստակեցնելու հետ կապված առաջարկվում է հստակեցնել նաև կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության շրջանակներում իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերի շրջանակներում մատուցվող ուսուցման ծառայությունների մասով այդ կետով սահմանված դրույթները կիրառելու հետ կապված հարցերը:	Ընդունվել է: Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին կետում «ծառայությունների մատուցումը» բառերից հետո լրացվել են «, ինչպես նաև Կառավարության սահմանած կարգով իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերի շրջանակներում ուսուցման	Ընդունվել է:

		րդ հոդված, 1-ին կետ	Այդ նպատակով առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածի 1-ին կետում լրացնել «, ինչպես նաև Կառավարության սահմանած կարգով իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերի շրջանակներում ուսուցման ծառայությունների մատուցումը» բառերը:	ծառայությունների մատուցումը» բառերը:	
5.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **օրենքի նախագծի 11-րդ հոդված**	ՀՀ ԱԺ կողմից 2026թ. մարտի 4-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83 օրենքը և այն ուժի մեջ է 2027 թվականի հունվարի 1-ից: Այդ օրենքի 10-րդ հոդվածով օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետից հանվել են առևտրի էլեկտրոնային հարթակով ֆիզիկական անձանց ապրանքների վաճառքին վերաբերող դրույթները՝ դրանք կանոնակարգելով օրենսգրքի 70-րդ հոդվածում լրացվող նոր 3-րդ մասով: Հաշվի առնելով, որ օրենսգրքի 70-րդ հոդվածի լրացվող 3-րդ մասով կարգավորվում են առևտրի էլեկտրոնային հարթակով ֆիզիկական անձանց ապրանքների վաճառքին վերաբերվող դրույթները, առաջարկվում է օրենքի նախագծի 11-րդ հոդվածից հանել «, կամ առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը էլեկտրոնային առևտրի շրջանակներում ապրանքներ է մատակարարում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին» բառերը:	Ընդունվել է: Նախագծի 11-րդ հոդվածից հանվել են «, կամ առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը էլեկտրոնային առևտրի շրջանակներում ապրանքներ է մատակարարում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին» բառերը:	Ընդունվել է:

6.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **օրենքի նախագծի 22-րդ հոդված**	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) օտարումից եկամուտը հաշվարկվում է դրանց համար օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսից ոչ պակաս չափով: «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներում 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-569-Ն օրենքով կատարված լրացումներով այն շինությունների նկատմամբ, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է, ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը սահմանվել է 1.0: Անհրաժեշտություն է առաջացել կատարել հստակեցումներ շինարարության թույլտվության ժամկետն ավարտված կամ երկարաձգված կառուցվող շինությունների օտարման գործարքների մասով շահութահարկով հարկման բազայի որոշման առանձնահատկությունների կիրառման առումով: Գործող կարգավորումներով շինարարության թույլտվության ժամկետն ավարտված կամ երկարաձգված կառուցվող շինությունների օտարման մասով եկամուտները որոշելիս օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան հիմք է ընդունվում	Ընդունվել է: Նախագծի 22-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 1-ին կետով «1) 1-ին մասի վերջին պարբերության 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել նոր 6-րդ կետով հետևյալ խմբագրությամբ՝ «6) կառուցապատողի կողմից կառուցապատման իրավունքով կառուցված այն անավարտ, կիսակառույց շինությունների օտարման գործարքների դեպքում, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է:» Միաժամանակ, հոդվածում նոր կետի լրացման հետ կապված փոխվել է հոդվածի կետերի համարակալումը:	Ընդունվել է:

			կադաստրային արժեքի 80 տոկոսը, շինարարության թույլտվության ժամկետն ավարտված կամ երկարաձգված կառուցվող շինությունների օտարման: Այդ հարցի կարգավորման նպատակով առաջարկվում է օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով կատարել բացառություն և սահմանել, որ կադաստրային արժեքի 80 տոկոսի չափով եկամտի որոշման կանոնը չի կիրառվում կառուցապատողի կողմից կառուցապատման իրավունքով կառուցված այն անավարտ, կիսակառույց շինությունների օտարման գործարքների դեպքում, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է: Միաժամանակ, հոդվածում նոր կետի լրացման հետ կապված առաջարկվում է փոխվել է հոդվածի կետերի համարակալումը:		
7.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **օրենքի նախագծի 29-րդ հոդված**	Նախագծի 11-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը վերախմբագրվում՝ սահմանելով, որ նույն կետով սահմանված դեպքերում ԱԱՀ-ի պարտավորությունը կրում է Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմնում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, եթե պայմանագրային հարաբերությունների կողմը ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր է: Նշված դեպքերի մասով ԱԱՀ-ի պարտավորությունները կատարելու համար ոչ	Ընդունվել է: Նախագծի 29-րդ հոդվածում «ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը ծառայության, այդ թվում՝ էլեկտրոնային, մատուցման կամ Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինվել են «Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին համապատասխան ԱԱՀ հաշվարկելու ու վճարելու պարտավորություն կրելու	Ընդունվել է:

			ռեզիդենտ կազմակերպությունը պետք է հաշվառվի հարկային մարմնում: Հարկային մարմնում հաշվառման հարցերը հստակեցնելու նպատակով առաջարկվում է նախագծի 29-րդ հոդվածում «ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը ծառայության, այդ թվում՝ էլեկտրոնային, մատուցման կամ Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինել «Օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին համապատասխան ԱԱՀ հաշվարկելու ու վճարելու պարտավորություն կրելու դեպքում, այդ թվում՝» բառերով:	դեպքում, այդ թվում՝» բառերով:	
8.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **օրենքի նախագծի 29-րդ հոդված**	Ոչ ռեզիդենտ կազմակերպության հարկային մարմնում հաշվառման հարցերի հստակեցմամբ պայմանավորված առաջարկվում է հստակեցնել նաև, որ հարկային մարմինը հրապարակում է ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայություններ մատուցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ցանկը: Այդ նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 288-րդ հոդվածի 9.1-ին մասի երկրորդ նախադասությունում «էլեկտրոնային ծառայություն» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին» բառերը:	Ընդունվել է: Նախագծի 29-րդ հոդվածը լրացվել է «, իսկ նույն մասի երկրորդ նախադասությունում «էլեկտրոնային ծառայություն» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին» բառերը» բառերով:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ	**Լրամշակված նախագծի 9-րդ հոդվածում լրացված 1-ին կետով (ԱԱՀ-ի մասով) և 22-րդ հոդվածի 1-ին կետով (շահութահարկի մասով), կատարված լրացումների հետ կապված առաջարկվում է հստակեցնել նաև, որ լրացվող դրույթները կիրառվելու են 2023**	Ընդունվել է: Նախագծի 32-րդ հոդվածում լրացվել է նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝«3. **Սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի, 22-րդ հոդվածի 1-ին**	Ընդունվել է:

		կատարելու մասին» **օրենքի նախագծի 32-րդ հոդված**	**թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ: Այդ նպատակով առաջարկվում է նախագծի 32-րդ հոդվածում լրացնել 3-րդ մաս, որի համաձայն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի և 22-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները կտարածվեն 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:** Միաժամանակ, լրամշակված նախագծում 32-րդ հոդվածում նոր մասի լրացման հետ կապված առաջարկվում է փոխել է հոդվածի մասերի համարակալումը:	**կետի դրույթները տարածվում են 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:»** Միաժամանակ, լրամշակված նախագծի 32-րդ հոդվածում նոր մասի լրացման հետ կապված փոխել է հոդվածի մասերի համարակալումը:	
10.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **օրենքի նախագծի 32-րդ հոդված 1-ին մաս**	**Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետով, 5-րդ հոդվածի 4-րդ կետով, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ հոդվածներով Օրենսգրքում կատարվող փոփոխությունների, ինչպես նաև օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսվող դրույթների կիրարկումն ապահովելու համար պետք է իրականացվեն համապատասխան ծրագրային ապահովման աշխատանքներ:** Այդ ծրագրային ապահովման աշխատանքների իրականացման ժամանակահատվածը կարող է տևել մինչև 9 ամիս՝ ներառելով նաև այդ դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերի ընդունման համար անհրաժեշտ ժամանակահատվածը: Ուստի այդ հանգամանքով պայմանավորված առաջարկվում է փոփոխություն կատարել նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասում և նախագծի այն դրույթների, որոնց կիրարկումը հնարավոր է ապահովել միայն համապատասխան ծրագրային աշխատանքների ավարտից հետո, ուժի մեջ	Ընդունվել է: Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է «, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետի, 5-րդ հոդվածի 4-րդ կետի, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ հոդվածների և սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի: Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետը, 5-րդ հոդվածի 4-րդ կետը, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ հոդվածները և սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից» բառերով:	Ընդունվել է:

			մտնելու ժամկետը սահմանել 2027 թվականի հունվարի 1-ը: Այդ նպատակով առաջարկվում է նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետի, 5-րդ հոդվածի 4-րդ կետի, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ հոդվածների և սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի: Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետը, 5-րդ հոդվածի 4-րդ կետը, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ հոդվածները և սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից» բառերով:		
11.	ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **օրենքի նախագծի 32-րդ հոդված**	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի պահանջներին համապատասխան՝ եթե հարկ վճարողը հարկային տարվա ընթացքում պետք է համարվի ԱԱՀ վճարող, օրինակ՝ գերազանցել է ԱԱՀ շեմը կամ այլ հիմքով դադարել է գործել հարկման հատուկ համակարգում, ապա 20 օրյա ժամկետում պետք է ներկայացնի ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն: Եթե հայտարարություն չի ներկայացվում հարկ վճարողը ԱԱՀ վճարող չի հաշվառվում: Արդյունքում՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներից հաշվարկվում ու վճարվում է ԱԱՀ՝ առանց ձեռքբերումների ու ներմուծումների մասով ԱԱՀ-ի հաշվանցումներ կատարելու: Այդ հարցի կարգավորման նպատակով առաջարկվում է հնարավորություն տալ հայտարարություն չներկայացրած հարկ վճարողներին մինչև 2026թ. դեկտեմբերի 21-ը ներկայացնելու դիմում: Այդ դիմումի հիման վրա հարկ վճարողները նախորդ հարկային տարիների համար հնարավորություն կունենան՝	Ընդունվել է : Նախագծի 32-րդ հոդվածում լրացվել է նոր 5-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝ «5. Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ներառող հարկային տարիների ընթացքում, երբ Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով, 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում հարկ վճարողի կողմից չի ներկայացվել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն և չի հաշվառվել ԱԱՀ վճարող, հարկ վճարողը կարող է մինչև 2026 թվականի դեկտեմբերի	Ընդունվել է:

			մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ներկայացնելու ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն: Այդ նպատակով առաջարկվում է օրենքի 32-րդ հոդվածում լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ՝ «Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ներառող հարկային տարիների ընթացքում, երբ Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով, 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում հարկ վճարողի կողմից չի ներկայացվել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն և չի հաշվառվել ԱԱՀ վճարող, հարկ վճարողը կարող է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 21-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել դիմում՝ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու հնարավորություն տալու մասին (այսուհետ՝ Դիմում): Դիմումը ներկայացվում է թղթային կրիչով կամ էլեկտրոնային փոստով՝ հարկային մարմնի սահմանած ձևին համապատասխան: Սույն մասին համապատասխան ներկայացված Դիմումի հիման վրա մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով, 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում ու ժամկետներում հարկային մարմնի կողմից հաշվառվում է որպես ԱԱՀ վճարող: Սույն մասի դրույթները տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների	21-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել դիմում՝ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու հնարավորություն տալու մասին (այսուհետ՝ Դիմում): Դիմումը ներկայացվում է թղթային կրիչով կամ էլեկտրոնային փոստով՝ հարկային մարմնի սահմանած ձևին համապատասխան: Սույն մասին համապատասխան ներկայացված Դիմումի հիման վրա մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով, 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում ու ժամկետներում հարկային մարմնի կողմից հաշվառվում է որպես ԱԱՀ վճարող: Սույն մասի դրույթները տարածվում են	

			նկատմամբ և հարկային մարմնի կողմից որպես ԱԱՀ վճարող չհաշվառելու հիմքով վարչական ակտերով առաջադրված ԱԱՀ-ի պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման: Ենթակա են վերահաշվարկման նաև դատական կարգով բողոքարկված վարչական ակտերով հարկային մարմնի կողմից որպես ԱԱՀ վճարող չհաշվառելու հիմքով առաջադրված ԱԱՀ-ի պարտավորությունները, այդ թվում՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում:»: Միաժամանակ, լրամշակված նախագծում 32-րդ հոդվածում նոր մասի լրացման հետ կապված առաջարկվում է փոխել է հոդվածի մյուս մասերի համարակալումը:	2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ և հարկային մարմնի կողմից որպես ԱԱՀ վճարող չհաշվառելու հիմքով վարչական ակտերով առաջադրված ԱԱՀ-ի պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման: Ենթակա են վերահաշվարկման նաև դատական կարգով բողոքարկված վարչական ակտերով հարկային մարմնի կողմից որպես ԱԱՀ վճարող չհաշվառելու հիմքով առաջադրված ԱԱՀ-ի պարտավորությունները, այդ թվում՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում:»: Միաժամանակ, լրամշակված նախագծի 32-րդ հոդվածում նոր 5-րդ մասի լրացման հետ կապված փոխել է հոդվածի մասերի համարակալումը:	
12.	ՀՀ կառավարություն	«Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական	«Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներում 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-569-Ն օրենքով	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է նոր օրենքի նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «ՆԱԽԱԳԻԾ	Ընդունվել է:

		արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	կատարվել են լրացումներ: Այդ լրացումների համաձայն՝ ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերում կառուցվող այն շինությունների նկատմամբ, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է, ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը սահմանվում է 1.0: Սակայն կատարված օրենսդրական փոփոխությամբ նպատակ չի հետապնդվել շինարարության թույլտվության ժամկետն ավարտված լինելու պարագայում ինքնին բազմաբնակարան բնակելի շենքի նկատմամբ կիրառել ավարտվածության աստիճանը բնութագրող 1.0 գործակից, այլ փոխարենը նպատակ է հետապնդել, մասնավորապես, շինարարության թույլտվության ժամկետն ավարտված կամ երկարաձգված լինելու պարագայում բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված առանձին գույքային միավորների նկատմամբ կիրառել ավարտվածության աստիճանը բնութագրող 1.0 գործակից: Հարցի կարգավորման հետ կապված անհրաժեշտ է փոփոխություն կատարել «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում և սահմանել, որ 1.0 գործակիցը կիրառվում է շինարարության թույլտվությունն ավարտված կամ երկարաձգված բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ բնակարանների,	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻՆ ՄՈՏԱՐԿՎԱԾ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Հոդված 1. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն կետով սահմանված՝ ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը չի կիրառվում Կառավարության սահմանած	

			բազմաբնակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված ավտոտնակների, հասարակական և արտադրական նշանակության շինությունների շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի որոշման համար: Այդ նպատակով առաջարկվում է նախագծին կցել նոր օրենքի նախագիծ հետևյալ բովանդակությամբ՝ «ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻՆ ՄՈՏԱՐԿՎԱԾ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Հոդված 1. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն կետով սահմանված՝ ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը չի կիրառվում Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող	ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ բնակարանների, բազմաբնակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված ավտոտնակների, հասարակական և արտադրական նշանակության շինությունների նկատմամբ, եթե տվյալ բազմաբնակարան բնակելի շենքի շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է: Սույն պարբերությունում նշված դեպքերում ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը սահմանվում է 1.0 և գնահատությունն իրականացվում է ըստ բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ նախագծային բնակարանների,	

			բնակավայրերում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ բնակարանների, բազմաբնակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված ավտոտնակների, հասարակական և արտադրական նշանակության շինությունների նկատմամբ, եթե տվյալ բազմաբնակարան բնակելի շենքի շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է: Սույն պարբերությունում նշված դեպքերում ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը սահմանվում է 1.0 և գնահատությունն իրականացվում է ըստ բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ նախագծային բնակարանների, բազմաբանակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված ավտոտնակների, հասարակական և արտադրական նշանակության շինությունների: Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:»:	բազմաբանակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված ավտոտնակների, հասարակական և արտադրական նշանակության շինությունների: Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:»:	